

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ԳՐՈՂԸ ԵՒ ՓՈԲՐԻԿ ՈՐԴԻՆ

Ռուսաց նշանաւոր գրող Լեւ Տօլստօյը, որի ձայնին բնականաբար առանձին նշանակութիւն է տրուում բոլոր խոշոր քաղաքական և հասարակական խնդիրներում, շատ բացասական է վերաբերում ոռւս ինտելիգենցիայի և բանուոր դասի այժմեան շարժմանը: Նորերս լրագիրները տարածեցին կոմսի աննպաստ կարծիքը այդ շարժման մասին: Մի կարծիք, որ անտարակոյս շատ էլ փայլուն տեղ չի բռնիլ «Յարութեան» հեղինակի խորհրդաւոր կենսագրութեան մէջ:

Տօլստօյի բացասական կարծիքի առիթով մի քանի ոռւս գիւղացիներ Պետերբուրգի մի ոռւս լրագրում տպեցին հետեւեալ վերին աստիճանի խրատական նամակը.—

Ամօթ է ձեզ, կոմս, որ չէք հասկանում այժմեան շարժումը: Դուք ինքներդ, ստանալով Աստծուց հազուագիւտ ձերք, օրէնքից դուրս էք: Ձեզ ոչ ոք ոչինչ չի անիլ, ինչ-որ էլ անէք և գրէք: Դուք վեր էք օրէնքից: Բայց յիշեցէ՛ք ձեր փոքր եղբայրներին. չէ՞ որ նրանք էլ կամենում են ունենալ մարդկային իրաւունքներ և սպասում էին, որ դուք կըպաշտպանէք իրանց. ինչպէս եւ ամենքը ունէին իրաւունք սպասելու, աչքի առջև ունենալով ձեր գրուածները: Մենք գիտենք սուրբ գրութիւնները և ուսումնասիրում ենք: Մարդու հոգին ազատ է, բայց մարդկանց երջանկութիւնը և Աստծու արքայութիւնը երկրի վրայ իրազործելու համար հարկաւոր է, որ մարմինն էլ ազատ լինի, այսինքն ամբողջ անձը, որ չըլինի բռնութիւն խղճի, հաւատի, մտքի և խօսքի վրայ: Մենք ամաչում ենք կոմս, որ ստիպուած ենք այս մասին գրել ձեզ:

Կարճ և ազդու. Խիստ բնորոշ է ոռւս նշանաւոր գրող Տօլստօյի համար, որ նա հանրային շատ մեծ խնդիրների և մեծ դժբախտութիւնների ժամանակ, երևան է եկել իւր կար-

ծիքների անսպասելի դաժանութեամբ: Յիշում ենք և երբեք չենք մոռանալ նրա օլիմպիական սառնութիւնը մի քանի հարիւր հազար տաճկահայ կոտորուածների վերաբերմամբ: Յիշում ենք և երբեք չենք մոռանալ, որ նա չը բարեհաճեց ոչ միայն մի քանի տող նուիրել միլլիօնաւոր հայաժողովների և թշուառների բողոքին, այլ և չը տատանուեց մինչև անգամ բացարձակ արտայայտելու իւր անտարբերութիւնը:

Ինչ է նշանակում մեծ հեղինակի այս վարմունքը: Մեծութիւն, թէ՞ միւրաժ: Մարդիկ կարող են չափազանց յափշտակուել և մի սոսկ տաղանդաւոր գրողի նոր մարգարէի բարձրութեանը արժանացնել. բայց միթէ մարգարէները անողոք են եղել դէպի թշուառների վիճակը:

Ճակատագրական է ուսա նշանաւոր գրողների վերջը նըրանց հոգեկան աշխարհի համար առհասարակ: Գօգօլը գրեց գրեց և վերջը ընկաւ միստիցիզմի մէջ: Դոստոեւսկին նկարագրեց, նկարագրեց թշուառների ու զրկուածների վիճակը և վերջը դարձաւ նոյնպէս միստիկ և թթու ազգամուր: Այժմ Տօլստօյը: Նա հերքում է Շէքսպիրի արժանաւորութիւնները: Տէրը նրա հետ Շէքսպիրին շատերն են փորձել կործանել և այժմ նրանց անուան հետքն անգամ չի մնացել, իսկ Շէքսպիրը կայ և կը մնայ: Սակայն հերքել ուսա լաւագոյն ինտելիգենցիայի և ուսա բանուորների լաւագոյն մասի ձգտումների իմաստը, այս այնքան էլ թոյլ յանցանք չէ, որ պատմութեան պատժից զերծ մնայ...

Այժմ մեծ հօր փոքրիկ որդու մասին: Սա ևս գրող է, միայն գրող է աստուծո շուռ տուած: Տօլստօյ-որդին «Ноб. Времѣ»-ի խախտող սիւններից մէկն է: Դեռ մի քանի ամիս առաջ այս նոր Հերոստրատը սպառնում էր Սուվօրէին կազմած մի գնդով ջնջել աշխարհի երեսից Անգլիա կոչուած պետութիւնը և Նեվայի ափերից ուժակոծում էր ծովերի թագաւոր Ալբիօնի հրեշաւոր նաւերը: Այժմ նա ճգնում է թղթէ փամփուշտներով իւր հայրենիքի ներքին հսկայական շարժման առաջն առնել: Երագիրներ է յօրինում միմեանցից խորիմաստ և հանճարեղ, որոնք սակայն ենթարկւում են իւր հայրենիքի հրախտածո հրապարակասոսների ծաղրին և ծիծաղին:

ՆՈՐ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան հայ պարբերական մամուլը հարստանում է մի քանի նոր հրատարակութիւններով: «Ազգային բանբեր»